

Օրինակ՝ ԳՖՀ 1949թ. Հիմնական օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ֆեդերալ նախագահը չի կարող մտնել Ֆեդերացիայի կամ հողերի կառավարության կամ օրենսդիր մարմնի կազմի մեջ: Երկրորդ դեպքի ցայտուն օրինակ է Հնդկաստանը, որի 1950թ. Սահմանադրության 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Միության գործադիր իշխանությունը վերապահվում է Նախագահին և իրականացվում է նրա կողմից ուղղակիորեն կամ Սահմանադրությանը համապատասխան նրան ենթակա պաշտոնատար անձանց միջոցով: Իսկ 79-րդ հոդվածը սահմանում է, որ Միության համար հիմնադրվում է խորհրդարան, որը բաղկացած է Նախագահից և երկու պալատներից, որոնք համապատասխանաբար հայտնի են որպես Նահանգների խորհուրդ և Ժողովրդական պալատ:⁴ Երրորդ դեպքի դասական օրինակ է հանդիսանում ԱՄՆ-ն, որի Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին բաժնի 1-ին նախադասությունն ամրագրում է, որ գործադիր իշխանությունը վերապահվում է ԱՄՆ Նախագահին:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո՝ 1991 թվականի օգոստոսի 1-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածով սահմանվեց, որ «Հայաստանի Հանրապետության նախագահը հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է և գլխավորում է գործադիր իշխանությունը»:⁵

1995թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը, Հանրապետության Նախագահին ճանաչելով հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավոր, որևէ կերպ չէր սահմանում նրա ինստիտուտի հասկացությունը և վերջինիս տեղը պետական իշխանության համակարգում: Սակայն նրա սահմանադրաիրավական կարգավիճակն ամրագրող նորմերի վերլուծությունը վկայում էր, որ Հանրապետության Նախագահը, ունենալով էական լիազորություններ գործադիր իշխանության բնագավառում, չէր մտնում պետական իշխանության երեք թևերից որևէ մեկի մեջ: Հիշյալ եզրահանգմամբ, սակայն հարց է առաջանում. արդյո՞ք Հանրապետության Նախագահը, չմտնելով պետական իշխանության որևէ թևի մեջ, դուրս չի մնում պետական իշխանության համակարգից այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Հիշյալ հարցադրմանը, կարծում ենք, լիարժեք պատասխան տրվեց 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում, երբ ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածով սահմանվեց. «Հանրապետության Նախագահը պետության գլուխն է: Նա հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: ՀՀ Նախագահը Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է»:

Սահմանադրագետների կարծիքով, Հանրապետության Նախագահին պետության գլխի կարգավիճակ վերապահելը պայմանավորված է մի շարք նախադրյալներով: Նախ՝ դա է պահանջում ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային հարաբերություններում

⁴ Сту` Ёїїпөөдөөё çäðååáéїüð äїпöåðñå: (Áåååéїáðåðáїéý, Õðáїöéý, Áåðїáїéý, Ёðååéý, Áåðїıáéñééé Ñїїç, Ñїáåéї. Øðåðü Æıáðééé, Ñїııéý, Ёїáéý: ó:áá. ııñıáéå-5-á éçå., ıáðåðåá. é äıı. /ñıñö. ñå., ıáð., áåð. áååå. é åñðöı. ñö. Â.Â. İ áéåéıå.- İ .: Âıéååðñ Êéöååð, 2006.- çç 454:

⁵ Сту` Դայաստանի Դանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.).- Եր.: 1995թ.- էջ 158:

պետության ներկայացման մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը: Ապա՝ առավել նպատակահարմար է այս գործառույթների իրականացումը սահմանադրորեն վերապահել հենց պետության գլխին և ոչ թե գործադիր իշխանության ղեկավարին:⁶ Այստեղից կարելի է եզրակացել, որ պետության գլուխը, հանդիսանալով ՀՀ պետական իշխանության մարմինների համակարգի բաղկացուցիչ մաս, առանաձևահատուկ տեղ է զբաղեցնում դրանում և անմիջականորեն չի մտնում այդ իշխանության թերթից և ոչ մեկի մեջ:

Արտասահմանյան երկրների սահմանադրական պրակտիկայում պետության գլուխը սերտորեն համագործակցում է գործադիր իշխանության հետ: Սակայն, կախված պետության կառավարման ձևից և քաղաքական ռեժիմից, այդ գործընթացը կարող է տարաբնույթ դրսևորումներ ստանալ: Նախագահական հանրապետություններում նախագահը պետության գլուխ լինելու հետ մեկտեղ հանդես է գալիս որպես գործադիր իշխանության ղեկավար: Այսպիսի կառավարման ձև ունեցող պետություններում պետության գլուխը, միաժամանակ օժտված լինելով կառավարական լայն իշխանությամբ, իրականացնում է պետական գործերի անմիջական կառավարումը, ձևավորում է պետության քաղաքական կուրսը և ապահովում դրա կենսագործումը: Այս ձևի պայմաններում պետության գլխին՝ իբրև հակակշիռ հանդես են գալիս հիմնականում օրենսդիր և դատական իշխանությունները, ինչը բացատրվում է նրանով, որ ինքնին գործադիր իշխանությունը չի կարող հանդիսանալ հակակշիռ այն պարզ պատճառով, որ հենց ինքը՝ պետության գլուխն է հանդիսանում գործադիր իշխանության կրողը: Հետևաբար, այսպիսի կառավարման ձև ունեցող երկրներում առկա է գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև հակասությունների առաջացման իրական վտանգ:⁷

Խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում պետության գլուխը, իրականացնելով զուտ բարձրագույն ներկայացուցչական գործառույթներ, գործադիր իշխանության իրականացմանը իր անմիջական մասնակցությունը չի ցուցաբերում, չնայած այն բանին, որ կոնկրետ քաղաքական իրավիճակներում, և հատկապես իշխող կուսակցության ղեկավար կազմին պատկանելու դեպքում, անմիջականորեն կարող է ազդել այդ գործընթացի վրա:⁸

Իսկ խառը կառավարման ձև ունեցող պետություններում պետության գլուխը, որպես կանոն, կիսում է գործադիր իշխանության բնագավառի իր գործառույթները կառավարության հետ, որը, որպես կանոն, գլխավորում է վարչապետը: Վերջինս էլ իր լիազորությունների իրականացման համար սահմանադրական պատասխանատվություն է կրում Հանրապետության Նախագահի կամ խորհրդարանի առջև: Շատ դեպքերում, Հանրապետության Նախագահը նաև մասնակցում է գործադիր իշխանության գործունեության կազմակերպման գործընթացին՝ հրավիրելով և վարելով կառավարության նիստերը կամ վավերացնելով նրա որոշումները: Օրինակ՝ Ֆրանսիայի Սահմանադրության 9-րդ հոդվածը սահմանում է, որ «Հանրապետության Նախագահը նախագահում է Նախարարների խորհրդում»: Միևնույն ժամանակ, 21-րդ հոդվածը

⁶ Տես՝ Հակոբյան Ռ. «Նախագահը՝ որպես պետության գլուխ» // «Օրենք և Իրականություն» 2006, թիվ 1.- էջ 3:

⁷ Տես՝ Ածօթիյի Ա. Էինօթօթ Ի ծաթաիօծ ծանօթեթե Ածի աիթ: ըծաի օծաթիւի-իծաի աիե աիթեթ.-Ած.: Ի օծօծ Աիօ, 1996.-չջ 47:

⁸ Տես՝ Էիւնօթօթօթիւիւի իծաի չածօթաթիւօ ըծաի. /Մի ա. ի աւ. ծա. Ի .Ա. Աաթթայ, Բ.Է. Էաթի Է Է.Ի . Կիծեի ա.-2-ա Էթ., ի ածածա. - Ի .: Ի իծի ա, 2008.- չջ 264-265:

սահմանում է, որ «Վարչապետը ղեկավարում է կառավարության գործունեությունը»:⁹ Այսպիսի իրավիճակում և՛ Հանրապետության Նախագահը, և՛ վարչապետը կարող են հավակնել գործադիր իշխանության ղեկավարմանը: Չնայած այն բանին, որ Հանրապետության Նախագահն իր կարգավիճակով ավելի բարձր է, քան վարչապետը, երկրների այս խմբում նրանց փոխհարաբերությունները գործադիր իշխանության բնագավառում պայմանավորված են բազմաթիվ քաղաքական-կուսակցական գործոններով:

2005թ. խմբագրմամբ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածով ամրագրվեց, որ կառավարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը, իսկ արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ: Դա, կարծում ենք, վկայում է պետության գլխի և գործադիր իշխանության լիազորությունների համատեղելիության մասին, ինչը լայն տարածում ունի արտասահմանյան բազմաթիվ պետություններում: Սակայն, բոլոր դեպքերում, պետության գլուխը պահպանում է արտաքին քաղաքական նախաձեռնությունների իրավունքը և երբեմն, կառավարության դիրքորոշումից անկախ, միջազգային հարաբերությունների ոլորտում իր հայեցողությամբ կարող է հանդես գալ ինքնուրույն նախաձեռնություններով:

Պետության գլխի և գործադիր իշխանության փոխհարաբերությունների բնագավառում առանձնակի կարևորվում է կառավարության կազմավորման գործընթացը: Այսպես՝ եթե 1995թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ՀՀ Նախագահը միանձնյա նշանակում և պաշտոնից ազատում էր վարչապետին, ապա 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը վարչապետ է նշանակում Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին:

Այն փաստը, որ Հանրապետության Նախագահը նախկինում վերահսկում էր կառավարության կազմավորման գործընթացը, պետության կառավարման ձևը դարձնում էր նախագահական, այլ ոչ թե կիսանախագահական, ինչպես Ֆրանսիայում, որտեղ վարչապետն ընտրվում է խորհրդարանական մեծամասնության կողմից նույնիսկ այն դեպքում, երբ նրա կազմում ներկայացված չէ նախագահի կուսակցությունը:¹⁰

2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում, ՀՀ զսպումների և հակակշիռների համակարգը, կարծում ենք, դարձավ ավելի հավասարակշռված, քանի որ ներկայիս իրավական կարգավորմամբ Հանրապետության Նախագահին իրավունք է վերապահված վարչապետ նշանակել բացառապես խորհրդարանական ուժերի դասավորվածությունից ելնելով: Բացի այդ՝ պետք է նշել, որ նա այլևս օժտված չէ վարչապետին՝ իր հայեցողությամբ ազատելու լիազորությամբ: Վերջինս հրաժարական է տալիս միայն խորհրդարանի կողմից նրան անվստահություն հայտնվելու դեպքում:

⁹ Տես՝ *Ἐπίπλοδοσὲς καθόλααίτιο ἀϊνόααδῆοα: (Ααεεείαδεοαίεϋ, Ὀδαίοεϋ, Ἄαδὶ αίεϋ, Ἐοαεϋ, Ἄαδὶαεεῆεε Ἴιϋϋ, Ἴιἄαεῖ. Ὀδαοῦ Ἄι αδεεε, βῖῖῖεϋ, Ἐῖαεϋ: 0-αα. ῖῖῖῖαεα-5-α εϋα., ῖαδαδαα. ε αῖῖ. /ῖῖῖῖ. ῖἄ., ῖαδ., ααδ. αααα. ε αῖῖοῖ. ῖῖ. Ἄ.Ἄ. ῖ αεεαεῖα.- ῖ .: Ἄῖ εοαδῖ Ἐεοααδ, 2006.- չց 58:*

¹⁰ Տես՝ *Ἄδooῖῖῖῖ Ἄ. Ἐπίπλοδοῖ Ἰ δαϋεααῖδα α ῖῖῖῖῖῖααδῆεεδ δαῖῖῖῖαεεεαδ: Ἐπίπλοδοσοϋϋ ε ῖῖεεδδ-αῖῖεαϋ δααεεῖῖῖῖ: Ἴδααῖ εοαεεῖῖ-ῖ δααῖ αῖ ε αῖ αεεϋ.- Ἄδ.: Ἰ αααεαῖ οαδῖῖῖῖῖ, 2006.- չց 77-78:*

Քննության առարկա հիմնախնդրի համատեքստում կարևոր է նշել, որ մինչ սահմանադրական փոփոխությունները, Հանրապետության Նախագահը, համաձայն 1995թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ կետի, խորհրդակցելով Ազգային Ժողովի նախագահի և վարչապետի հետ, կարող էր արձակել խորհրդարանը: Ընդ որում՝ այստեղ վերջիններիս կարծիքը կրում էր խորհրդատվական բնույթ: Չնայած այն բանին, որ Սահմանադրությունը նախատեսում էր որոշակի սահմանափակումներ, այն է՝ արձակման արգելքը Հանրապետության Նախագահի պաշտոնավարման վերջին վեց ամսվա և ՀՀ ԱԺ ընտրություններից հետո մեկ տարվա ընթացքում, ռազմական և արտակարգ դրության ժամանակ, ինչպես նաև Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարց հարուցված լինելու դեպքում, ամեն դեպքում այս իրավունքի շնորհիվ պետության գլուխը արդյունավետ հնարավորություն ուներ վերահսկել կառավարության և Ազգային Ժողովի գործունեությունը:

2005թ. խմբագրմամբ ՀՀ Սահմանադրության մեջ նախատեսվեց, որ Հանրապետության Նախագահը կարող է արձակել խորհրդարանը այն դեպքում, երբ վերջինս երկու ամսվա ընթացքում երկու անգամ անընդմեջ հավանություն չի տալիս կառավարության ծրագրին: Հիշյալ նորմի տրամաբանությունը կարծում ենք կայանում է նրանում, որ պետության գլուխը կարող է վարչապետի պաշտոնում նշանակել միայն այն անձին, որը վայելում է խորհրդարանական մեծամասնության աջակցությունը: Իսկ եթե խորհրդարանը երկու անգամ անընդմեջ հավանություն չի տալիս իր կառավարության ծրագրին, ապա պետության գլխին մնում է միայն արձակել խորհրդարանը և երկիրը դուրս բերել ստեղծված քաղաքական ճգնաժամից: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ՀՀ Սահմանադրության մեջ նման կատեգորիկ պահանջով նորմի ամրագրումը կառավարության ծրագրի հաստատման հարցում այլընտրանքի հնարավորություն չի ընձեռում Ազգային Ժողովին, քանզի գիտակցելով պետության գլխի կողմից արձակվելու վտանգը՝ օրենսդիրը ստիպված կլինի հաստատել կառավարության կողմից ներկայացված՝ իր համար անընդունելի ծրագիրը, ինչի արդյունքում կձևավորվի Հանրապետության Նախագահի «վստահությունը» վայելող կառավարություն, որի գործունեությունը, սակայն, չի նպաստի երկրի բնակչության կենսական հիմնախնդիրների լուծմանը:

ՀՀ Սահմանադրության մեջ նախատեսվեցին այլ դեպքեր ևս, երբ պետության գլուխը կարող է արձակել խորհրդարանը, այն է՝ հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ որոշում չկայացնելու, հերթական նստաշրջանի ընթացքում երեք ամսից ավելի նիստերի չգումարման, կամ երեք ամսվա ընթացքում իր կողմից քննության առնված հարցերի վերաբերյալ որևէ որոշում չկայացնելու: Այս դեպքերում Հանրապետության Նախագահն արձակում է խորհրդարանը՝ Ազգային Ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությունների հիման վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ կարելի է հանգել այն եզրահանգման, որ մինչ սահմանադրական փոփոխությունները Հանրապետության Նախագահը ցանկացած պատճառով կարող էր արձակել խորհրդարանը, բացառությամբ որոշակի դեպքերի, իսկ ներկայումս՝ Հանրապետության Նախագահը ընդհանրապես չի կարող արձակել խորհրդարանը, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված մի քանի դեպքերի:

1995թ. խմբագրմամբ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության Նախագահը լայն լիազորություններ ուներ կառավարության գործունեության

կազմակերպման ոլորտում: Մասնավորապես՝ 86-րդ հոդվածի համաձայն՝ կառավարության նիստերը, որպես կանոն, հրավիրում և վարում էր Հանրապետության Նախագահը, իսկ վարչապետը իրավունք էր ստանում հրավիրել և վարել կառավարության նիստերը՝ միայն Հանրապետության Նախագահի հանձնարարությամբ: Փաստորեն, այստեղ խոսքը գնում էր առանձին հանձնարարության մասին՝ որոշակի ժամկետով:¹¹

ՀՀ կառավարության նիստերը հրավիրելու և վարելու լիազորության հետ սերտորեն առնչվում էր նաև 1995թ. խմբագրմամբ ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված՝ Հանրապետության Նախագահի իրավունքը վավերացնել կառավարության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերը: Համաձայն վերոնշյալ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ կառավարության որոշումները ստորագրում էր վարչապետը, վավերացնում՝ Հանրապետության Նախագահը:

Իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետի համաձայն՝ Սահմանադրության հիշյալ նորմերի համակարգային վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրահանգել, որ տվյալ դեպքում Հանրապետության Նախագահը հանդիսանում է նաև գործադիր իշխանության ղեկավար:¹²

Մեր կարծիքով, միանշանակ ողջունելի է, որ 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում հստակեցվեց վարչապետի իրավական կարգավիճակը՝ որպես գործադիր իշխանության ղեկավար: Կառավարության նիստեր հրավիրելու և վարելու լիազորությունները սահմանադրորեն վերապահվել են վարչապետին, սակայն արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել Հանրապետության Նախագահը:¹³ Ներկայիս իրավական կարգավորմամբ՝ կառավարության որոշումները ստորագրում է վարչապետը: Չնայած այն բանին, որ 2005թ. խմբագրմամբ ՀՀ Սահմանադրությամբ վերացվեց կառավարության կողմից ընդունվող բոլոր որոշումները վավերացնելու Հանրապետության Նախագահի լիազորությունը, սակայն, ՀՀ Սահմանադրության 88.1-րդ հոդվածում նախատեսված է միայն մեկ բացառություն, ըստ որի՝ Հանրապետության Նախագահը վավերացնում է մարզպետների նշանակման և ազատման մասին կառավարության որոշումները:

Մեր կարծիքով, կատարված փոփոխությունները էապես կնպաստեն գործադիր իշխանության ինքնուրույնության բարձրացմանը, քանի որ նախկին իրավական կարգավորման պայմաններում, երբ պետության գլխի կողմից անխտիր վավերացվում էին կառավարության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերը, կառավարությունը, Հանրապետությունում իրականացնելով գործադիր իշխանությունը, իրավասու չէր ինքնուրույն ընդունել իր իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ որևէ իրավական ակտ առանց Հանրապետության Նախագահի «թույլտվության»:

2005թ. խմբագրմամբ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հանրապետության Նախագահը կարող է կասեցնել կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամկետով և դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու նպատակով: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

¹¹ Տես՝ Ածօթիյի Ա. Էի թօժօօ Ի ծաթօթի ծա ծաի օթօթօթ Ըծի աի էյ : թծաի էօթօթի ի-ի ծաի աի է ռի աթթ.-Ած.: Ի օժօծ Ըի օ, 1996.- չԸ 218-219:

¹² Տես՝ Օթ-ածթիյի Ա. Ի ածաթ Էի թօժօօ էյ ծաի օթօթօթ Ըծի աի էյ / Ի օթ. ծաթ. Ա.Ա. Ի օծաթիյի.- Ած.: Ի չած, 2001.- չԸ 146:

¹³ Տես՝ 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածը:

տվյալ գործով Հանրապետության Նախագահը սահմանադրական դատարան կարող է դիմել կասեցման վերաբերյալ հրամանագիրն ուժի մեջ մտնելու օրը: Նույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ նշված գործերով սահմանադրական դատարանը որոշում է ընդունում ոչ ուշ՝ քան դիմումը մուտքագրելուց մեկ ամիս հետո:¹⁴

Այս նոր սահմանադրական դրույթի առնչությամբ գերմանացի հայտնի իրավաբան, պրոֆեսոր Օ. Լուխթերհանդը ղեռնս 2001թ. նշել է. «Հանրապետության Նախագահը այս իրավական հնարավորությունը կարող է օգտագործել ոչ միայն բացառիկ հիմնավոր դեպքերում, այլև որպես քաղաքական միջոց՝ իր կողմից քաղաքական նպատակներով մերժված կառավարության որոշումների դեմ և փորձել անցկացնել իրեն նախընտրելի որոշումները: Բացի այդ, սահմանադրական դատարանի ներգրավումը վտանգավոր է նաև այն առումով, որ սահմանադրական դատարանը կարող է ներքաշվել Հանրապետության Նախագահի և կառավարության միջև հրատապ և քաղաքական մեծ նշանակություն ունեցող վեճերի մեջ, ինչը կարող է վտանգել դատարանի հեղինակությունը»:¹⁵

Քննության առարկա հիմնախնդրի համատեքստում ուշադրության է արժանի այն փաստը, որ ինչպես 2007, այնպես էլ 2008 թվականի ընթացքում, ինչպես վկայում են ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի հունվարի 21-ի ՍԴԱՌ-4 աշխատակարգային որոշմամբ հաստատված «Սահմանադրական դատարանի 2007թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ» և ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի հունվարի 15-ի ՍԴԱՌ-2 աշխատակարգային որոշմամբ հաստատված «Սահմանադրական դատարանի 2008թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ» հաղորդումները, ՀՀ կառավարության որոշումների սահմանադրականության հարցերով ՀՀ Նախագահի կողմից որևէ դիմում չի ներկայացվել ՀՀ սահմանադրական դատարան դա այն դեպքում, երբ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը դիմող սուբյեկտների համար ոչ միայն հայեցողական լիազորություն է, այլև ենթադրում է նաև որոշակի պարտավորություն՝ երկրում սահմանադրական օրինականություն հաստատելու և Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու հարցում: Առավել ևս այն իրավիճակում, երբ սահմանադրական փոփոխությունների արդյունքում ղեռնս բազմաթիվ իրավական ակտեր չեն համապատասխանեցվել այդ փոփոխություններին:¹⁶

Գտնում ենք, որ ներկայիս իրավական կարգավորման պայմաններում, երբ պետության գլուխը ստացել է կառավարության իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանելու նկատմամբ յուրովի վերահսկողություն իրականացնելու իրավասություն, արդյունավետ և կարևոր երաշխիքներ են ստեղծվել սահմանադրական նպատակների, սկզբունքների ու կոնկրետ նորմերի՝ կառավարության գործունեության մեջ արմատավորման համար, ինչն էապես կնպաստի երկրում սահմանադրության գերակայության և նրա անմիջական գործողության ապահովմանը:

Պետության գլխի և գործադիր իշխանության փոխհարաբերությունների համատեքստում կարևորություն է ներկայացնում նաև գործադիր իշխանության մարմինների համակարգի կազմավորման հիմնահարցը, որտեղ ներկայիս իրավական կարգավորմամբ էական դերակատարում ունի պետության գլուխը: Այսպես՝ վերլուծելով ՀՀ

¹⁴ Տես՝ ՀՀ ՊՏ 21.06.06./32 (487):

¹⁵ Տես՝ Պողոսյան Վ., Թովմասյան Հ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը. Համառոտ պարզաբանումներ.- Եր.: 2005.- էջ 89:

¹⁶ <http://www.concourt.am/armenian/report/index.htm>:

Սահմանադրության 5-րդ գլուխը և համադրելով այն պետական իշխանության մյուս մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի ամրագրմանը նվիրված 4-րդ և 6-րդ գլուխների հետ, կարելի է եզրահանգել, որ գործադիր իշխանության մարմինները, հանդիսանալով պետական իշխանության համակարգի բաղկացուցիչ մաս, նույնպես կազմում են որոշակի համակարգ: Սակայն հիշյալ գլխի իրավանորմերը որևէ դրույթ չեն ամրագրում գործադիր իշխանության համակարգի մասին՝ սահմանափակվելով կառավարության կազմավորման և գործունեության կազմակերպման հետ կապված հարցերի, նրա իրավասությունների շրջանակի, ինչպես նաև տարածքային կառավարման իրականացման հիմնադրույթների կարգավորմամբ:

Միաժամանակ պետք է նշել, որ թերևս առանձին իրավանորմերի վերլուծությունն է միայն վկայում կառավարությունից զատ այլ գործադիր իշխանության մարմինների «գոյության» մասին: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը՝ որոնք օրենքով վերապահված չեն **այլ պետական** կամ տեղական ինքնակառավարման մարմինների (ընդգծումը մերն է՝ Բ.Ղ.):

2005 թվականի խմբագրմամբ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսվեց, որ կառավարության կառուցվածքը կառավարության առաջարկությամբ սահմանվում է օրենքով: Սակայն, ի հակադրումն հիշյալ սահմանադրական նորմի՝ ՀՀ գործադիր իշխանության մարմինների համակարգին առնչվող որոշակի հարցադրումներ կարգավորված են ենթաօրենսդրական ակտով, այն է՝ ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-174-Ն հրամանագրով:

Մեր կարծիքով՝ նմանօրինակ իրավական կարգավորմամբ ակնհայտորեն խախտվում է իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքը, քանի որ պետական իշխանության մարմիններից երկուսի համակարգին առնչվող հարցերը կարգավորված են Սահմանադրությամբ և օրենքով, իսկ գործադիր իշխանության պարագայում որոշակի հարցերով առկա է սահմանադրական, որոշակի հարցերով՝ օրենսդրական, որոշակի հարցերով՝ ենթաօրենսդրական կարգավորում: Բացի այդ՝ գտնում ենք, որ պետության գլխի վերոնշյալ հրամանագիրը հակասում է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասին, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտը պետք է կարգավորի միաբնույթ (մեկ ոլորտ կարգավորող) հարաբերություններ, քանի որ գործադիր իշխանության մարմինների համակարգին առնչվող առանձին հարցադրումները որևէ կերպ չեն կարող դիտարկվել որպես հանրապետական գործադիր մարմինների գործունեության կազմակերպման ինստիտուտի բաղկացուցիչ մաս:

Մասնավորապես՝ հիշյալ հրամանագրի 5-րդ և 6-րդ կետերը, չնախատեսելով որևէ դրույթ նախարարների վերաբերյալ, սահմանում են կառավարության կազմի մեջ մտնող վարչապետի և փոխվարչապետի ինստիտուտների հասկացությունը: Այսպես՝ նույն հրամանագրի 7-րդ և 8-րդ կետերը, համապատասխանաբար սահմանելով «կառավարության քաղաքականությունն առանձին բնագավառներում մշակում և իրականացնում են հանրապետական գործադիր մարմինները» որոնք ստեղծվում՝ վերակազմակերպվում և լուծարվում են վարչապետի առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով» և «ՀԳՄ-ներն են՝ Հայաստանի Հանրապետության նախարարությունները և կառավարությանն առընթեր պետական

կառավարման մարմինները»: Հավելենք, որ հիշյալ հրամանագրի 8-17-րդ կետերով կարգավորված են հանրապետական գործադիր մարմինների ներքին համակարգին առնչվող մի շարք հարցեր, ինչը, մեր կարծիքով նույնպես հիշյալ իրավական ակտով կարգավորվող հարցերի շրջանակից դուրս է:

Արդյունքում՝ գործադիր իշխանության մարմինների համակարգին առնչվող մի շարք սկզբունքային հարցադրումներ և որ առանձնակի կարևոր է՝ դրանց ստեղծման« վերակազմակերպման և լուծարման հարցերը ներկայումս կարգավորված են պետության գլխի կողմից հրապարակվող ենթաօրենսդրական ակտով այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասը հիշյալ հարցերի շրջանակի համար հստակ նախատեսում է օրենսդրական կարգավորման պահանջ՝ պարտադիր պայման համարելով ոչ թե վարչապետի, այլ կառավարության առաջարկությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ «ՀՀ կառավարության կառուցվածքի մասին» օրենքով անհրաժեշտ է հստակ սահմանել ՀՀ գործադիր իշխանության մարմինների համակարգը, քանի որ վերջիններս կառավարության հետ մեկտեղ հանդես են գալիս որպես միասնական համակարգ և նպաստում են վերջինիս կողմից գործադիր իշխանության իրականացմանը՝ հաշվի առնելով համակարգի հիեռարխիկ բնույթը, ինչպես նաև փոխադարձ ենթակայության սկզբունքները:

Մեր կարծիքով՝ 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ պետական իշխանության համակարգում կատարված փոփոխությունները արդարացիորեն վկայում են այն մասին, որ Հանրապետության Նախագահն այլևս չի հանդիսանում գործադիր իշխանության ղեկավար: Նրան վերապահված լիազորությունների լայն շրջանակը միանշանակորեն բնութագրում է նրան՝ որպես պետության գլուխ: